

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ՔՈՒՐԴԻՍՏԱՆՈՒՄ:

Այս յօդուածը լոյս է տեսել „National-Zeitung“-ի 1892 թ. 477 և՛ն համարների բանասիրական բաժնում: Հեղինակն է Վոլդեմար Բելքը (Woldemar Belck) որի ճանապարհորդութեան նպատակն էր Հայաստանի հնութիւնները և բնեւածեւ արձանագրութիւնները ուսումնասիրել: Նա բաւական յաջողութիւններ ունեցաւ և կարողացաւ մի քանի նոր, մինչև օրս անյայտ արձանագրութիւններ գտնել որ նա յանձնել է պրոֆեսոր Լեմանին ուսումնասիրելու և հրատարակելու համար: Այդ մասին տես «Հանդէս Ամսօրեայի» 2 և 3 համարների հետևեալ յօդուածները: «Ուսուցչապետ Լեման» Վոլդեմար Պելքին գտած սեպագիր արձանագրութեանց վրայօր», էջ 45. և «Շամիրամ»-սուր, ֆէշիշ կէօլ և Թօփրագ գալէ», էջ 04:

Ծան. թարգմ.

I.

ԵՐԵՒԱՆԻՅ ՄԻՆՁԵՒ ԻԳԴԻՐ,

Երբ ես վերջացրել էի հնագիտական - պատմական նպատակների համար ուսական բաժնի Հայաստանում ձեռնարկած ճանապարհորդութիւններս և արդէն պատրաստուում էի տաճկական Հայաստանը այցելելու, մեծ անհամբերութեամբ և լարուած զրութեամբ նայում էի գէպի իմ կատարելի ճանապարհորդութիւնը Գուրգիստանում, մանաւանդ գիտէի, որ ուրիշ ճանապարհորդներ իրանց նկարագրութեանց մէջ այն կոշմերով անցնելը շնորհիւ

բաղմաթիւ քրդական վայրենի աւազակախմբերի յարձակմանց շատերը այդ կողմերով ճանապարհորդելը ներկայացնում էին միացած մեծ վտանգների և դժուարութեանց հետ։ Այն տեղեկութիւնները որ ես հաւաքեցի իմ հայ և ռուս բարեկամներից, աւելի էին զօրեղացնում իմ տածած երկիւղը որովհետեւ լսում էի ամեն տեսակ աւազակային յարձակմանց մասին, լսում էի, թէ ճանապարհորդներին անխնայ կերպով կոլոպտում են և շատ չնչին սխալմանը էր ինձ համար, երբ ամեն կողմից հաստատապէս վկայում էին, որ քրդերը իմ անձիս դէմ ուրիշ բան չեն անիլ, կամ շատ շատ մի լաւ կըծեծեն, այդ էլ ի հարկէ այն դէպքում, երբ հակառակութիւն չեմ ցոյց տալ և համբերութեամբ կըդիտեմ թէ ինչպէս են ինձ կոլոպտում։ Յամենայն դէպս այսքանը ապահով էր, որ չորս շաբաթ առաջ երբ Վանի ռուսաց կոնսուլի թարգմանը Երեւանից գէպի Վան էր գնում, չնայելով նրան ուղեկցում էին չորս տաճիկ զաւասաններ և ղինւորներ, յարձակման էր ենթարկուել քրդերի կողմից և երբ երկար հրացանաձգութեամբ նրա քաջ պաշտպանները մէկը միւսի հետեւից քաջութեամբ յետ էին քաշուել, կարգին կոլոպտուել էր։ Սակայն ուղղակի այդ հանգամանքը և ինձ սպասող վտանգը աւելի էին գրգռում ինձ ճանաչել այն երկիրը, որը տիրող պայմանների շնորհիւ այլ կերպ ուսումնասիրել չէր կարելի, յոյս ունենալով հարուստ տեղեկութիւններ հաւաքել, մի յոյս որ բարեբախտաբար ի գերեւ չեղաւ։

Որովհետեւ արդէն տարուց բաւական անցել էր, շտապեցի Երեւանում պատրաստել և լրացնել ինչ որ հարկաւոր էր Տնտեսական տնտեսական կատարելիք ճանապարհորդութեանս համար և ապա ուղևորեցայ գէպի Եմիւնիին Հայոց կաթողիկոսի բնակատեղին, հետո ունենալով մի ծառայ և գաւառապետից ինձ տուած երկու ձիւորներ և այնտեղ իջեւանեցի հիւրասէր Սարգիս եպիսկոպոսի մօտ, որի մօտ ես արդէն երկրորդ անգամն էր իջեւանում էի։ Սակայն իմանք էլ հիւրասիրութեամբ հոգ է տանում ամենապիտուակեղ եղանակաւ թէ ուխտաւորների թէ պատուաւոր հիւրերի վրայ, նա սեփական

միջոցներով մի հիւրատուն է պահպանում, բաղկացած 50-ից¹ տւելի սենեակներից, որոնք բոլորն էլ միահաւասար գահաւորւած են թէև պարզ, բայց շատ հիմնաւոր և բաւական հարուստ կերպով ինչ որ գոյութիւն էր սպասել քաղաքակրթութիւնից հեռու գտնւող մի այգւլիսի տնկիւնում: Բոլոր օտարականներին այնտեղ կերակրում են և ծառայում բոլորովին ձրի: Չափից զուրս հեռացած կըլինէի այս նկարագրութեան շրջանակից, եթէ ես խօսէի նաև վանքի հանգամանքների, նրա արտակարգ հետաքրքիր պատմութեան, նրա բաղմամբիւ՝ հանրօգուտ հիմնարկութեանց, ինչպէս նաև հայկական եկեղեցու կազմակերպութեան վրայ, ես կուզէի միայն մի բան նկատել և շեշտել, եթէ մէկը հիմնովին ուսումնասիրի այդ բաները, ի նկատի առնի միևնոյն ժամանակ հայկական արտակարգ առանձնական ազգային բնաւորութիւնը, անկասկած շատ կըմեղմացնի այն խիստ դատաւիճիւք, որ հէնց սկզբից կարգում է այդ երկրում միայն մի անգամ՝ ճանապարհորդելով: Անհրաժեշտ է որ նա, ինչպէս ես եմ արել, երկար տարիներ Հայաստանում ժամանակ անցկացնի, ապա ապրի ժողովրդի հետ, նրա մէջ, ճանաչի նրա վշտերն և ուրախութիւնները, որպէս զի կարող լինի հիմնովին ճանաչել և գնահատել նրա առաւելութիւնները, բայց կարողանայ նաև ըմբռնել, թէ ինչպէս կարող էին ազգային բնաւորութեան յատուկ սխալները հազար տարուց աւելի տևող մահմեդական բռնակալութեան և սորկութեան ներքև ներկայ սուր կերպարանքին հասնել: Յամենայն գէպս է և կմնայ զարմանալի, ինչ որ արել է Հայոց եկեղեցու գլուխը, կաթողիկոսը իւր և վանքի ինքն ըստ ինքեան չնչին եկամուտով (հաստատ եկամուտն է տարեկան մօտ 80,000 ռուբլի, բայց պէտք է հաշուել նաև ուխտաւորների ընծաները) հոգևորականների բարոյական բարձրացման, մանուկ սերունդի կրթութեան, հայերէն գրքերի տպելու և տարածման, մեծամեծ ջրանցքների միջոցաւ երկրի մշակութեան համար և դեռ անում է:

1. Ծան. թարգմ. Աաղարապատը ունի միայն 25 սենեակ, իսկ ուրիշ հիւրատուն վանքը չունի:

Ես վճռել էի սկզբում միայն երկու օր մնալ ԼՂմիածնում, բայց աւելի երկար մնացի շնորհիւ անցաթուղթ ստանալու համար ծագած դժուարութեան: Իրաւ է իմ անցաթուղթս միանգամայն կարգին էր. իմ մօտս ունէի նաեւ Սուլթանի գաղանի գիւանատնից ստացած մի թեսքերէ, որը ձեռք էր բերել ինձ համար պրօֆեսօր Վիրխովի խնդրանօք մեր Կոստանդինուպօլսի նախկին գեսպան պարոն Բաղուխիյի միջոցաւ մեր արտաքին գործերի ատեանը և որը անհրաժեշտ է ասիական Տաճկաստանի խորքերը ճանապարհորդողին, եթէ նա չի ցանկանում անսպասելի կերպիւ իբրեւ լրտես բանտարկուել կամ թէ հապճեպով երկրից դուրս վճռուելի: Սակայն իմ հայ ծառայ Սարգիս Յովհաննէսեանը՝ չունէր անցաթուղթ և պէտք է ձեռք բերէր: Մինչև այդ թուղթը ստանալը անցան 10 օր և մօտ 50 բուբլի ծախք: Այս ուշացումը ի հարկէ մեզ համար հաճելի չէր, բայց վերջը ԼՂմիածնից ճանապարհ ընկանք և ուղևորուեցինք դէպի Իզդիր՝ ռուս տաճկական սահմանը:

Արարատի գլուխը բարձրանալու մտադրութիւնս ուշացման պատճառաւ ի դերեւ էր ելել, որովհետեւ մի քանի օր առաջ նրա գագաթի վրայ ընկել էր առաջին ձիւնը, ուստի հարկաւոր էր առանց ուշանալու դէպի Բայազիդ գնալ: Ազնուամիտ Սարգիս արքեպիսկոպոսը հրաժեշտի ժամանակ տուեց ինձ մի նոր յանձնարարական թուղթ ևս, մինչդեռ նա առաջ ինձ տուել էր մի կոնդակ, ուղղաժ համայն հայ հոգևորականաց, իբրեւ տեղապահ քիչ առաջ մեռած Մակար կաթողիկոսի (Der freundliche Erzbischof Sarkis hatte mir beim Abschiede zu dem mir schon früher von ihm in Vertretung des kürzlich Verstorbenen Katholicos Makar, ausgestellten, an die gesammte armenische geistlichkeit gerichteten Hirtenbriefe noch ein sehr warmes Empfehlungsschreiben...)¹

Երկրորդ թուղթը գրում էր նա իւր երիտասարդական բարեկամ 1. Ծան. թարգ. Մեզ յայտնի է, որ Սարգիս եպիսկոպոս Տէր. Գասպարեանը Տեղապահ չէ եղած, ուստի անբացատրելի է մեզ համար՝ ինչպէս կարող էր նա յիշեալ կոնդակը տալ:

Դիագիւնի և Բայազիդի մէջ եղող Ուլքիլիսայի առաջնորդ Յովհաննէս արքեպիսկոպոսին: Մի առանձին ոգևորութեամբ սլացաւ մեր փոքրիկ արշաւախումբը դէպի հարաւային կողմում տարածուող Երասխի դաշտաւայրը: Եղանակը հրաշալի էր, երկինքը պարզ և ամպից ազատ, իսկ ջերմութիւնը աննշան էր, շուաքի մէջ ցոյց էր տալիս Շ. 23¹/₂ աստիճան, ապացոյց վերահաս աշնանը: Արարատի երկու գագաթները ներկայացան աչքերիս առջին անգամ միանգամայն պարզ և ամպերից ազատ. թէև չորս շաբթից աւելի էի այգտեղ. իրաւամբ Արաքսի հեռու հարթութիւնից մօտ 3000 և 4500 մետր բարձրացող լեռնային հրակաների տեսքը շատ փառահեղ է և որոշ կերպով հակապատկեր է կազմում իւր լերի միայն ձիւնապատ գագաթով փայլող ամայութեամբ նրա ստորոտում սփռուող զուարթալից դաշտերի հետ, որոնցից հանդարտ մարդկային ձեռքերի աշխատանքը ստանում է հարուստ վարձատրութիւն իւր ջանադիրութեան համար: Այդ դաշտաւայրը Կովկասի և նրան կցուած հայկական բարձրաւանդակի ամենապտղաբեր մասերիցն է, որովհետև ջրելու գիւրութիւններ ունի. պատճառ թէ այստեղ և թէ ամեն տեղ, բացառութեամբ բարձրութեանց վրայ եղող երկրամասերի, երկրի պտղաբերութիւնը կախուած է գիւրութեամբ և առատութեամբ ջրելուց: Որովհետև այստեղ ջրառատ Երասխը ցած ափերի մէջ գլորում է իւր պղտոր ալիքները, ուստի ոչ մի առանձին գիւրարութիւն չի ներկայացնում մեծ ջրանցքներ շինել, և ըստ այնմ գտնում ենք Երասխի երկու կողմերում աստիճանաբար բարձրացող հարթութեան վրայ բաւականի գեղեցիկ մշակութիւն, որ պահպանւում է դէպի ամեն կողմ ճիւղաւորուած ջրանցքներով: Եւ այդ ճոխ դաշտերի մէջ շինուած են գիւղեր, որոնք միանգամայն ծածկուած կանաչ անտառներում և մի տեսակ ուրախ կերպարանք են տալիս շուրջ բոլոր տարածուող ծառագուրկ տարածութեանը: Երեք ժամ արշաւելուց յետոյ հասանք Մարգարա կայարանը, որ 20 վերստ հեռու է և գտնւում է հէնց Երասխի ափին. այստեղ կէսօրուայ ժամին սակաւ ինչ դադար առինք: Արեւմտքից և հարաւից կուտակուող ամպերը շտապեցնում էին շարունակել ճա-

Նապարհը, որովհետև այդ օրը անպատճառ պիտի հասնէինք 20 վերստ հեռու ընկած Իգդիր աւանը, որպէս զի հնար ունենայինք միւս օրը Բայազետ հասնել: Մարգարա գիւղը թողնելով՝ նաւակամուրջով անցանք Երասխը, որ շինել է տուել կառավարութիւնը, որովհետև մի քանի տարի առաջ ռուսաց ինժէներներ ձեռքով այդտեղում կառուցած փայտեայ կամուրջը տարւել էր հեղեղից: Նաւակամուրջով անցնում են մարգիկ, կենդանիներ և կառքեր առանց վճարելու: Երասխը, որի միջով երբ երկու ամիս առաջ իմ ծառան ցանկացել էր ձիով անցնել հազիւ էր կեանքը փրկել, այդ տեղով հոսում է շատ նեղ, և լուռ, հազիւ 15 մետր լայնութիւն ունեցող տարածութիւնով, բայց հունը շատ խոր է: Երասխից դէպի հարաւ ճանապարհը աւելի վատացաւ, մենք անցնում էինք մէկը միւսի ետեւից ջրանցքների, որոնց ջրերը տեղ տեղ ճանապարհը մեծ տարածութեամբ փչացրել էին, այնպէս որ մեր ձիերը ճահճային, ցեխոտ ճանապարհով մեծ դժուարութեամբ էին առաջ գնում: Սակայն այդ ճանապարհը, որ անձրեւային եղանակներին միանգամայն անանցանելի է, կրում է «փոստային ճանապարհ» հոլարտ անունը: Ճանապարհը անցնում էր շարունակ գեղեցիկ գիւղերի միջով, մենք միայն կէսօրից յետոյ անցանք 15 մեծ և փոքր ջրանցքների, որոնք վերցրած են Երասխից և մատակարարում են դաշտեր ջրելու անհրաժեշտ ջուրը (կէսօրից առաջ անցել էինք 17 ջրանցքներ): Արևի մայր մոտելուց քիչ առաջ Իգդիր հասանք և հէնց իսկոյն սկսեց տեղալ սաստիկ անձրև, որից մենք ազատուեցինք պատասպարուելով մեր ձիերի հետ քարվանսարայի տանիքի տակ:

II.

ԻԳԴԻՐԻՅ ՄԻՆՁԵՒ ՏԱՃԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԸ:

Շնորհիւ հայերի և ռուսների իրաւամբ փառահեղ հիւրասիրութեանը մինչև այդ օրը ազատուած էի իմ երկար, արդէն հինգ ամիս տեւող ճանապարհորդութեանս ժամանակ ստիպուած լինելուց գիշերել ասիական հիւրանոցում (խան կամ քարվան-

սարայ): Այդտեղ՝ Իգդիրում առաջին անգամ ճանաչեցի քարվանսարան, բայց այնպէս հիմնովին, որ միանգամայն կորցրի ցանկութիւնս նորից կրկնելու, թէև յետոյ Հասանկալայում անհրաժեշտութիւնը ստիպեց ինձ այդ կրկնելու: Թէև պատուաւոր տեղը ինձ տուին, և ներկայ եղողները, գլխաւորապէս թուրքեր, որոնք իւրեանց ուղտերով և ուրիշ բեռնակիր կենդանիներով պիտի սահմանը անցնէին, առանձին յարգանքով հեռուէին մնում, սակայն անկարող եղայ տեղական պատուհասից ազատուել:

Պարզ է, որ այդպիսի պայմանների մէջ չէի կարող Իգդիրում հանգստացուցիչ քուն վայելել. ժամի երեքին արգէն արթուն էի և որովհետև մենք պիտի անցնէինք մի ճանապարհ, որ բարձր լեռների պատճառաւ մեծ դժուարութիւններ ունէր, ուստի Սարգսին պատուիրեցի ձիերին կարգին գարի ուտեցնել: Ամբողջ Անգրիկովկասում և հարեան Տաճկաստանում ձիերին առանց բացառութեան կերակրում են գարիով, վարսով գործ են ածում շատ հազուադէպ դէպքում: Մենք ընդունեցինք մեր պարզ նախաճաշը, որ ինչպէս միշտ՝ բազկացած էր թէյից, կաթից և չոր հացից, և ապա ձիերը բարձելով ժամի հինգին՝ կէս ժամ արևի ծագելուց առաջ շարունակեցինք մեր ուղին: Մենք առաջ էինք գնում բաւական արագ, օգը սառն էր, բայց պարզ միայն հարաւում տարածուած լեռների վրայ նկատելի էր թեթև ամպ. ձախ կողմում վեհութեամբ բարձրանում էր մեծ Արարատը, որի գագաթը սովորականին համաձայն ձեան սկստող տարածութիւնից գէպի վեր ծածկուած էր ամպով: Մեր տրամադրութիւնը շատ ուրախ էր: Սարգսը, շատ անգամ Վանում եղած լինելով ուրախանում էր որ պիտի տեսնի իւր այնտեղի ծանօթներին, մանաւանդ նրան միջոց էր տրուելու ճանապարհին տեսնել այն սուրբ և հուշակաւոր վանքերը, որոնց տեսութեան գնալը իւրաքանչիւր հայի ամենամեծ ցանկութիւններից մէկն է. ես էլ էի անհամբերութեամբ սպասում սահմանը շուտ անցնել, որպէս զի իմ ցանկութեանց և յոյսերի նպատակին՝ Վան քաղաքին մօտենայի և ի մօտոյ ծանօթանայի այն քրդերին, որոնց երկիւղ

ազդող անունը այնքան հռչակուած է: Ես կցանկայի այստեղ մի քանի նկատողութիւններ աւելացնել այդ ժողովրդի տարածման մասին, որովհետեւ նորա թէ առաջ և թէ մասամբ էլ այժմ աւելի են տարածուած գէպի հիւսիս քան սովորաբար ընդունուած է: Ես քրդեր եմ տեսել ոչ միայն Քուրդիստան կոչուած, գլխաւորապէս Տաճկաստանի, պատիանող երկրում, այլ նաեւ ուսական Հայաստանում ուր նորա բնակուած են գլխաւորապէս վերջին պատերազմում ռուսների ձեռքը ընկած երկրներում: Արիւնջայից գէպի արեւմուտք, Կարսի բարձրաւանդակի վրայ: Սակայն կարելի է հանդիպել երկրի հիւսիսային մասերում առանձին առանձին թափառող քրդական ընտանիքների, օրինակ ես նրանցից տեսել եմ նաեւ Գեօիչա լճի ափերում և հաւանական է ընդունել, որ երբեմն նորա թիւը Հայաստանի հիւսիսային մասում՝ Երասխի հովիտներում բաւական մեծ է եղել, քան այժմ: Այն չափով ինչ չափով ռուսները տիրապետեցին այդ երկրներին և ասրածեցին եւրոպական քաղաքակրթութիւն, քուրդերը աստիճանաբար յետ քաշուեցին և երկիրը թողեցին ուրիշ գաղթականներին: Ամենից առաջ սկսեցին գէպի Տաճկաստան գաղթել աւելի ազատ բաղարձակ աւազակաբարոյ, թափառող քրդերը, որոնց համար ռուսական հողի վրայ դուրեկան չէին որոշ պետական կարգ ու կանոնները: Սակայն շուտով նոցա հետեցին նաեւ խաղաղ, երկրագործութեամբ պարապող քրդերը (սոքա անկասկած մղուած են եղել կրօնական պատճառներից) և այժմ մենք հանդիպում ենք օրինակի համար Կարսի բարձրաւանդակի վրայ փոխանակ այդ թափառաշրջիկ, աւազակաբարոյ և մեծաւ մասամբ վրանաբնակ ժողովրդեան, գլխաւորապէս աշխատասէր, երկրագործ հայերի, ռուսների կամ գերմանիացիների: Շատ պարզ է, որ ես չէի կարող ճշմարտութեան մօտիկ մի որոշ գաղափար կազմել քրդերի սովորութեանց, բնաւորութեան և կեանքի եղանակի մասին, եթէ ի նկատի առնէի միայն այն քրդերին, որոնք ամբողջութիւնից բաժանուելով ապրում են փոքր ի շատէ քաղաքակրթուած ազգերի մօտ և ենթարկուելով նոցա մեղմ բնաւորութիւն են ստացել: Ես գեռ առիթ չէի ունեցել

ծանօթանալու քրդերի կեանքին նոցա մեծ համայնքների մէջ և այդ էր պատճառը, որ ես խիստ լարուած սպասում էի այդ ծանօթութեանը ի նկատի առնելով, որ իմ առաջ պիտի տեսնեմ մի թէև շատ հին, բայց համարեայ նախապատմական դրութեամբ ապրող մի ժողովուրդ, թէև այդ ժողովուրդը շրջապատուած է եղել բարձր քաղաքակրթութիւն ունեցող ազգերով:

Այդ տեսակ մտածողութեանց ազդեցութեան ներքոյ ուղղուեցինք ուրախ դէպի հարաւ: Արեւը դուրս եկաւ ժամի 5 $\frac{3}{4}$ և իւր առաջին ճառագայթներով ոսկեղօծեց մեր հօրիզոնի վրայ բարձրացող լեռների գագաթները և արդէն մեր ետեւում մնացած խզգիւրի երկու եկեղեցիների գմբեթները, մանաւանդ գեղեցիկ էին գիւղի հեռուում տարածուած այգիները՝ նայած այնպիսի մի բարձր դիրքից, որպիսին մեր գտնուած տեղն էր: Մենք անցել էինք չորս վերստ աստիճանաբար բարձրացող տարածութիւն, որը լաւ մշակուած էր, ապա դրան յաջորդեց մի տարածութիւն, որ մօտ 7 վերստ է և տարածւում է մինչև լեռան ստորոտը, սա բոլորովին անմշակ էր թողնուած և ըստ երևոյթին շօռ հող ունի: Ապա արեւելքում սկսում են փոքր լեռներ մեզ առաջնորդել, որ Արարատի համար բացառութիւն են, որովհետև տմեն կողմից նա կարծես հէնց առանձնացած բարձրանում է դաշտավայրի մէջ: Յետոյ սկսում է ճանապարհը նեղանալ և զառիւյր դառնալ, վերջանում է մի նեղ քարքարոտ ուղիով՝ մինչև հասնում ենք ռուսաց սահմանի վրայ եղող Օրգով կայարանը, որտեղ մենք 8 ժամից աւելի կանգ առանք: Սահմանի վերակացուն, Պ. Կասեւի հիւրընկալեց մեզ բարեկամաբար և տուեց այն բոլոր տեղեկութիւնները, որ ցանկացանք իմանալ սահմանի հաղորդակցութեան մասին: Օրգովից դէպի Բայազետ և Վան տանող ճանապարհը աննշաններիցն է, տարեկան այն տեղով հազիւ են անցնում 100 քարվան, այն էլ մեծ մասամբ ուղտերի քարվաններ: Ներմուծած գլխաւոր առարկաներն են թէյ, ծխախոտ, աննշան չափով հատիկներ և Վանի լճից փոքրիկ չորացրած ձկներ: Բացի յայտնի վաճառականութիւնից ծաղկած է մանաւանդ մաքսանենգութիւնը, անց են կացնում թէյ և ծխախոտ, թէև

ռուսաց սահմանի ղինուորները և վերակացուները խիստ ուշք են դարձնում: որովհետև բռնած ապրանքի մի որոշ տոկոսը իրանցն է: Տարեկան մօտ 6000 թուրքի է ստացւում մաքսանենգութեամբ բռնուած ապրանքների վաճառքից իգդիրում:

Մինչդեռ մենք դեռ խօսում էինք և պ. Կասեակին բարեկամաբար բացադրում էր ինձ մեզնից ցած տարածուած Երասխի գաշտավայրի հրաշալի գեղեցկութիւնները, սահմանից անցաւ բեռնակիր կենդանիների մի մեծ խումբ որ Բայազետից ցորեն էր տանում դէպի իգդիր: Որովհետև կենդանիներից իւրաքանչիւրը կարող է տանել միայն 6—7 փութ և փութը իգդիրում ծախւում էր 1,20 - 1,40 թուրքով և բերողները դրա համար գործ էին դնում երկու օր և միայն հազուադիւտ դէպքերում կարող են յոյս ունենալ նաև յետ տանելու համար բեռը գտնել, ուստի ես սկզբում չէի ըմբռնում: այդպիսի պայմանների մէջ ինչ օգուտ կարող է ստանալ բեռ բերողը:

Բայց շուտով իմացայ ես բանի էութիւնը և զարմացայ ասիական հնարագիտութեան վրայ: Պ. Կասեակին ինձ բացատրեց, որ հատիկների վաճառքը իսկապէս պատրուակ է, իսկ իսկական նպատակն է կենդանիների ներմուծումը: Որովհետև՝ մինչդեռ մտացու և աշխատող կենդանիների համար համեմատաբար մեծ մաքս կայ նշանակուած, բեռնակիրները ազատ են, ուստի բերողները չնչին գնով մի քանի փութ հատիկներ են ձեռք բերում Բայազետում, որի համար չնչին մաքս է նշանակուած և բարձելով կենդանիների վրայ ներս են բերում կենդանիներ, իսկ երկրի ներսում հսկել թէ ինչ են անում այդ կենդանիների հետ դժուար է: Սակայն պէտք է նկատել, որ սահմանի վրայ նշանակուած են կենդանաբոյժներ, որոնք քննում են սահմանը անցնող կենդանու առողջութիւնը:

Որգովը մի խելճ քրդական գիւղ է մօտ 200 տուն բրնակիչներով, որտեղ տները, ինչպէս առհասարակ բոլոր քրդական գիւղերում, շինուած են հողի տակ, այնպէս որ հեռուից դժուար է գիւղի իսկական մեծութիւնը իմանալ: Համարեայ գիւղի բոլոր բնակիչները այդ ժամանակում հեռացած էին իւրեանց հօտե-

րի համար արօտատեղիներ որոնելու, որովհետև գիւղի անմիջական շրջակայքը աննպատու բուսականութիւնից զուրկ է. մաքսատան ծառայողները ստիպուած են իւրեանց ձիերի համար հարկաւոր խոտը Իգդիրից բերել տալ:

Երբ մեր ձիերը իւրեանց դարին ուտում էին, որ մենք փութին 20 կոսէկ տալով գնել էինք յիշեալ քարվանից, մենք էլ նախաճաշի նստանք, որ ըստ տեղւոյն բաւական ճոխ էր: Ապա գիտեցին մեր անցաթղթերը, իսկ այդ առթիւ ազնիւ աստիճանաւորը յայտնեց ինձ, երկու տարի է ինքը այդտեղ և այդքան ժամանակում ես երկրորդ եւրոպացի ճանապարհորդն եմ, որ անցնում եմ այդ կայարանով: Հետևապէս այդտեղ չէր կարող նրա համար հետաքրքրական լինել և հասկանալի է, որ նա առանձին զուարճութիւն էր զգում իւրաքանչիւր անգամ, երբ միջոց ունէր գրնալ ինքն ըստ ինքեան ոչ հետաքրքիր Իգդիրը:

Ճամի 11-ին հրաժեշտ տուի հաճոյաքարոյ լեհացուն, որը իւր կողմից մինչև սահմանը մեզ մի քուրդ ուղեցոյց տուեց: Մենք շարունակեցինք դէպի հարաւ մեր ճանապարհը, որը քարքարոտ էր, նեղ և բարձրացող: Ճանապարհը միանգամայն անտանելի էր, թէև մի քանի տարի առաջ Սուլթանի որդու այդտեղով անցնելու պատճառով կարգի էր բերուած. տաքութիւնը աստիճանաբար սաստկացել էր և շուաքի մէջ հասնում էր մինչև $0^{\circ} 24\frac{1}{2}$ աստիճանի, բայց շուտով հասաւ նաև $27\frac{1}{2}$ աստիճանի, այնպէս որ խլճալով մեր ձիերի յիշյ դանդաղ էինք առաջ գնում: 5000 ոտից աւելի բարձրութեան վրայ անցանք մենք Օրգոփի քրդերի ցանած դաշտերի միջով. երբեմն, երբեմն կանգ էինք առնում և յետև նայելով հիանում էինք մեր առաջ տարածուող տեսարանով: Շատ պարզ կերպով երևում է Երասխի ամբողջ հովիտը մինչև Երևան, որ մօտ 75 վերստ հեռու է, իսկ նրա հետևում Սլաւգեսոյ լեռնաշղթայի պարզ ուրուագիծը և Գեօկչալճի ափերի լեռները: Այդ հաճոյական, պողաբեր դաշտավայրում օձապրտոյտներ է անում Երասխի արծաթեայ թելը, որի ընթացքը մենք կարողանում էինք տեսնել սկոած կողք ազտհանքի լեռանից մինչև Արարատի արևելեան ստորոտը:

Արարատի գագաթը սուրբականի համաձայն ծածկուած էր ամպով: Ժամի 12 ին մօտ հասանք խոտով ծածկուած մի փոքրից բարձրաւանդակ, որ ծածկուած էր մօտ մի դիւթին քրդական վրաններով: Իսկ նրանց շուրջը արածոււմէին բաւական թւով հօտեր: Եւ ժամի 12³/₄ ին վայելեցինք մենք վերջին անգամ Նրասիւի հովտի տեսարանը: Շուտով մեր աջ կողմում թռչինք քրդերին իբրեւ ամարանոց ծառայող Ձիլիգօլ գիւղը և հինգ վայրկեանից յետոյ ուրախութեամբ ողջունեցինք կրկին անգամ երեւոյող Արարատը, որի ներկայ ձեան սահմանը համեմատած մեր կանգնած գիրքի հետ հազիւ թէ 500 մետրից բարձր լինէր: Ժամի մէկին հասանք սահմանը և ձիերին մի ժամ հանգստութիւն տուինք:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ՔՈՒՐԴԻՍՏԱՆՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ՃԱՆԱԳԱՐ-
ՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ:

III.

ՏԱՃԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՑ ՄԻՆՁԵՒ ԲԱՅԱԶԵՏ:

Մենք գտնուում էինք 7,000 ոտ բարձրութիւն ունեցող սահմանի վրայ: Ով սուր է եւրոպական սահմաններին, որտեղ անհրաժեշտապէս գտնուում են դռնաւոր սիւներ և խրամներ, նա ասիական սահմանների վրայ այդ տեսակ ըաներ չի տեսնի: Սակայն ինձ հետ եկող քուրդ ուղեցոյցը մատնանիշ արեց, որ որոշ հեռաւորութեամբ դարսած քարեայ կոյտերը այդ նպատակին են ծառայում: Այն քարեայ կոյտը, որի մօտով մենք պէտք է անցնէինք մի ժամանակ պիրամիդի ձև է ունեցել, ինչպէս գրած էր մի քարի վրայ. պիրամիդի գրօի մասի քարերը սրբատաշ էին, իսկ ներսը անկանոն քարեր, սակայն քրդերը քանդել են տաշած քարերը և տանելով իւրեանց վրաններում հնոցներ են շինել: Ահռնաշղթան այդտեղում թումբի ձև ունի մօտ երկու մետր լայնութեամբ և այդ տափարակ տարածութեան վրայ աճում է առատութեամբ խոտ, ահա այդ է նպատակը քրդերին շինելու արդէն յիշեալ Ձիլիգօլ գիւղը: Բայի այդ սահմանի մերձաւորութիւնը — հինգ վեց վայրկեանում կարելի է սահմանին հասնել —

նոցա շատ ձեռնտու է, որովհետև նոքա մեծ դիւրութիւն ունին յանցանք գործած ժամանակ (սպանութիւն, տաւարի գողութիւն ևն.) շուտով սաճմանից անցնել: Սաճմանից անցնելը նոցա և թէ ուրիշների համար շատ դիւրին է, քանի որ տաճկական կողմից համարեայ թէ ուշադրութեան չէ առնուած սաճմանի պահպանութիւնը և եթէ պահպանութիւն էլ կայ շատ թոյլ է: Բայց ռուսները իրեանց սաճմանը բաւական լաւ են պահպանում, որպէս զի մաքսանենգութեան առաջն առնեն, տաճկական և պարսկական սաճմանի ամբողջ տարածութեան վրայ շինուած են իւրաքանչիւր վեցից մինչև եօթ վերստի վրայ կօզակների կայարաններ, որոնցից սաճմանի համար դուրս են ուղարկում երկու երկու կօզակներ, որոնք նստելով մի նախնական ձևով շինած պատուարանի տակ և փոխուելով իւրաքանչիւր վեց ժամից յետոյ դիտում են սաճմանը, բացի այդ առանձին խմբակներ գիշեր ու ցերեկ անցուգարձ են անում, այնպէս որ բաւական դժուար է սաճմանից աննկատելի անցնելը, մանաւանդ եւրոպացու համար: Սակայն այդ չի արգելում որ Պարսկաստանում բնակուող քրդերը օր ցերեկով անցնեն Նախիջևան և Երևան քաղաքների մէջ սաճման կազմող արագահոս Երասխ գետը և գողանան ձիեր, եղներ, այլ և այլ աւաղակութիւններ և մինչև անգամ սպանութիւններ կատարելով յետ փախչեն:

Երկար չտւեց ահա երևացին երկու ռուս զինուորներ լեռան շղթայի գլխին, սորա եկել էին մօտակայ կայարանից սաճմանը պահպանելու համար և դեռ միւս օրը պիտի փոխուէին: Նոցա բնակարանը մի խեղճ, փոքրիկ հիւղ էր, ուտելիք ստանում էին կայարանից ժամանակ առ ժամանակ, կարելի է երևակայել, թէ ինչ անմխիթար էր նոցա դրութիւնը ձմեռը:

Սաճմանի թմբի վրայ կանգնած, մի ոտս ռուսաց հողում միւս ոտս տաճկաց, իմ փառագաւոր և երկիւղալից ճանապարհը սկսելուց առաջ հետս վերցրած բաց նամակների վրայ բազմաթիւ հրաժեշտի ողջոյներ գրելով ուղղեցի իմ հայրենիքում եղած ազգականներին և բարեկամներին և տուի մեր քուրդ առաջնորդին, որ տանի Սրգով և կայարանից ուղարկի, ապա գիտեցի մեծ

հետաքրքրութեամբ հարաւում տարածուող տեսարանը: Արարատի լերկ լեռնաշղթայի լանջերից աչքերս ընկան մի մեծ ծառերից զուրկ տարածութեան վրայ, որի միջից անցնում էր մի գետի արծաթեայ շերտը. իսկ աւելի հեռուն վեհապանծ Ալադաղի փեշերը, իսկ զառիւլայր լեռան ստորոտի առաջի մասում, որից սկիզբն է առնում արեւելեան Եփրատը, երևում է տարատալի վրայ շինած Բայազետը և եթէ օդը մաքուր է՝ կարելի է քաղաքի առանձին տները բաւական պարզութեամբ որոշել: Արեւմտեան կողմում լեռները ծածկում էին տեսարանը, հիւսիսում նախապէս յիշած լեռնադաշտն էր, իսկ արեւելքում մեզ ողջունում էր կիսով չափ ամպերի մէջ ծածկուած Արարատը: Դէպի հարաւ պատկերը նոյնն էր ինչ դէպի հիւսիս, միայն աւելի փոքրիկ չափով. թէ այստեղ և թէ այնտեղ տարածւում էին դաշտավայրեր, որոնց միջով հոսում էր մի գետ և մինչդեռ մէկի վերջին սահմանը կազմում էին Ալագետը լեռան ճիւղաւորութիւնը միւսինը՝ Ալադաղինը: Բայց ինչքան մեծ տարբերութիւն հիւսիսի և հարաւի մէջ. արդէն քաղաքակիրթ Ռուսաստանի և միանգամայն բարբարոս Տաճկաստանի մէջ: Այնտեղ մեղուի պէս նստել են ջանասէր անձինք, որոնք գետից ջրանցքների միջոցով ջուր տանելով դէպի դաշտերը և այգիստով դարձնում են ծաղկալից մարգերի, այստեղ մի ծով, թոյլ ժողովուրդ, որոնք կենդանապահութեան չնչին պարապմունքի մէջ արդէն մեծ աշխատանք են տեսնում և թողնում են, որ գետի ջուրը հոսելով ծովը թափի դաշտերը առանց ոռոգելու թողնելով: Այնտեղ մէկ գիւղը յաջորդում է միւսին և նոցա մէջ տները միանգամայն ծածկուած են ծառաստանների և այգիների մէջ, այստեղ մի մերկ, արեւագէղ տափարակ, որտեղ աննշան թւով ցրուած գիւղերը, թէև ինձ հոյց էին տալիս իմ ուղեցոյցները, բայց չէի նկատում, որովհետև փայտի բացակայութեան պատճառաւ բոլոր տները հողի տակ են շինուած: Եւ իրաւամբ Քուրդիստանը ինձ վրայ հաճոյական տպաւորութիւն չգործեց, սակայն վերջում այդ առաջի տպաւորութիւնը շատ յաճախ անգամ կրկնուեց և միայն այն դէպքերում էր մեղմանում, կամ անհետանում, երբ հանդիպում էի այնպիսի տեղերի,

որտեղ քուրդերի հետ խառը ապրումէին մեծ թւով հայեր:

Մեր ձիերը լաւ կշտացել էին Օրգովից վերցրած գարուց, արգէն ժամանակ էր ճանապարհը շարունակելու, որովհետեւ գեռ բաւական տեղ ունէինք անցնելու, մինչև կհասնէինք ըստ երևոյթին ոչ հեռու մէջ եղող Բայազետը: Մինչև ձիերը բեռնելը ես վերջացրի իմ նամակները և Օրգով դարձող քուրդին յանձնեցի, ռուսաց հողի վրայ խմեցի Իգդիրից հետո վերցրած գինու վերջին բաժակը հայրենիքումս եղող սիրելիներիս առողջութեանը համար և անցայ տաճկաց երկիրը, սահմանի վրայ կանգնած զինւորն՝ բին ուրախ բարևներ ուղղելով:

Չառիվայր իջնելը աւելի դիւրին էր քան բարձրանալը, մանաւանդ որ այնքան էլ թէկ չէր: Եւ միայն Քարակել քրդական փոքրիկ գիւղի մօտից սկսում է ճանապարհը խիստ վատանալ, նա քարոտ է և անհարթ և այդպէս էլ տարածւում է մինչև լեռնաշղթայի ստորոտը: Արդէն գտնւում էինք մի հարթ աստիճանաբար դէպի հարաւ իջնող տարածութեան վրայ, բայց 5500 ոտից աւելի բարձր, ուրեմն գեռ շատ բարձր քան Օրգովը, հետեւապէս Իգդիրի համեմատութեամբ բարձրացել էինք 4000 ոտ, իսկ իջել էինք 1500 ոտ: Այդ միջոցում հորիզոնը ծածկուել էր ամպերով, եղանակը սկսել էր ցրտել և մեր ձիերն էլ լաւ ճանապարհի վրայ լաւ էին քայլում: Մի ժամանակ իմ ծառայի և չորս ձիերի հետ առանձին էինք, նայում էի դէպի ամեն կողմ սահմանի պահապաններ տեսնելու համար, որպէս զի նրանցից ճանապարհի համար առաջնորդ խնդրէի, սակայն մեր շուրջը ամայի էր և մնաց այդպէս: Մի կողմ թողինք լեռան բարձրութեան վրայ եղող Աղբուլաղ քրդական գիւղը, որի մօտ տեսանք մի ճահիճ և նրանից բղխող մի վտակ, որ յետոյ բաւական մեծանում է Կարար Էլաղ անունով: Ժամի 3 $\frac{5}{4}$ ին հասանք Կարաբուլաղ քրդական գիւղը և այնտեղ գտնուող տաճկական սահմանի կայարանը, տեղիւ, որոնք պատմական նշանակութիւն ստացան 1829 ռուս-տաճկական պատերազմի ժամանակ ռուսաց տարած յաղթութիւններով: Եթէ գիշեր լինէր կարող էինք միանգամայն աննկատելի կերպով Տաճկաստանի խորքերը մտնել և կամ անց-

նել պարսկական սահմանը՝ որովհետև այնտեղ էլ չկային սահա-
պաններ։ Կայարանի գլխավորը՝ Բեքիր աղան շատ բարեկամաբար
ընդունեց մեզ, հիւրասիրեց թէյով և հրաւիրեց գիշերը իւր մօտ
իջևանել։ Բայց ես շնորհակալութեամբ հրաժարուեցի, որովհետև
ցանկանում էի Բայազետ հասնել որ ինձ համար աւելի հե-
տաքրքրական էր։ Երբ ես ցոյց տալու համար դուրս հանեցի
իմ թղթերը, Բեքիր աղան խնդրեց առժամանակ թողնել այդ
նկատելով, որ տաճկական քաղաքաւարութեան դէմ է հանդի-
պողից իսկոյն հարցնել նրա անունը, աստիճանը ևն. դրա հա-
մար ժամանակ շատ կայ, երբ հանգստացած և մի բան կերած
կը լինինք։ Յետոյ նա պատմեց, որ մօտակայում եղող Թեազաքենդ
գիւղի քուրդ բնակիչները, որոնք 45 տուն են, քիչ առաջ հաւաքե-
լով իւրեանց ունեցած չունեցածը մոտադրուել են անցնել Ռուսաս-
տան, որպէս զի դրանով ազատուէին տաճկական զօրքում ծա-
ռայելուց, սակայն նա իւր ժանդարմներով ստիպել է նոցա յետ
գառնալ։ Բայց երէկ ռուսական քրդերից 150 հոգի զինուած
Բերդան հրացաններով անցել են սահմանը և օգնել իւրեանց եղ-
բայրակիցներին գաղթելու ժամանակ, այդ էլ իւր բացակայու-
թեան ժամանակ։ Իրաւ է նա վերագառնալուց յետոյ հետն ա-
ռած կայարանում եղած 25 ձիաւորները հալածել է նոցա, բայց
ուշ էր, նոքա արդէն անցել էին սահմանը իւրեանց հետ տանե-
լով մօտ 600 գլուխ տաւոր։ (Հաւանական է՝ տեսնելով նոցա
թւական գերազանցութիւնը չի էլ փորձել հասնել նոցա)։ Ըստ
երևոյթին նա վախենում է խիստ նկատողութիւն ստանալ իւր
մեծաւորից, ուստի խնդրեց ինձ իրողութիւնը նրան պատմեմ
և հաւատացնեմ, որ ամեն միջոց գործ է գրել, նոցա առա-
ջին առնելու համար, բայց քիչ մարդիկ ունենալով չի յաջողել։

Ապա նա նայեց իմ թղթերը և տեսնելով թեսկերէն աւելի
քաղաքաւարի դարձաւ. բնական է, որ կարիք չկար նայել այդ-
տեսակ թուղթ ունեցող ճանապարհորդի իրեղէնները։ Այստեղ
հարկաւոր եմ համարում նկատել, իբրև մի գովելի յատկու-
թիւն, որ Տաաճկաստանում ամեն տեղ պաշտօնեաները իմ ամ-
բողջ ճանապարհորդութեանս ժամանակ հետոս վարւում էին վե-

րին աստիճանի քաղաքավարի կերպով, ձեռնարկութիւններին մէջ ինձ աջակցում էին և այդ շնորհիւ իմ թեսկերէին: Ես մինչև անգամ հանգիստ կերպով անցայ Երզրումի վիլայեթով, որի վալին իւրաքանչիւր Եւրոպացու վրայ նայում է իբրև լրտեսի վրայ և սրբազան պարտք է համարում նոցա բռնել և բանտարկել. թէև ես էլ դժբախտաբար այդ վալիի համար առանձին թեսկերէ չէի ստացել, ցոյց տուի այն թեսկերէն, որ ստացել էի Տրապիզոնի վալիի համար: Համեմատելով այդ վարմունքը այն բազմաթիւ գանգատների հետ՝ մաքսի, ոստիկանական քննութեան ևն մասին, այն տեսակ ճանապարհորդների կողմից, ինչպէս օրինակ Միւլեր—Սիմոնիսը և Հիւլերնան որոնց հետաքրքիր գործը նորերումս լոյս տեսաւ, կըրտեսենք որ ազատ կը լինէին ձեռներին ունենալով կայսերական թեսկերէ: Հասկանալի է որ այդ տեսակ պայմանի մէջ այլ և այլ ճանապարհորդներ միանգամայն իրար հակառակ տեղեկութիւններ են հաղորդում:

Որովհետև ես ցանկանում էի երեկոյեան մենակ հասնել Բայազետ, բայց տաճկերէն չգիտէի, ուստի Բեքիր աղան Բայազետի կառավարիչ Մեհմէդ Էփենդուն իմ անձնաւորութեանս մասին մի քանի տող գրեց և ինձ ու Սարգիսին մի մի ձիաւոր տուեց, այնպէս որ ժամի հնգին շարունակեցինք մեր ճանապարհը: Իմ ձին,—պէտք է նկատեմ որ շատ քաջ և դիմացիուն հեծնելու ձի էր, որը առանց ընդհատման 5-ից մինչև 6 ժամ անցընում էր իւրաքանչիւր ժամում 12 վերստ և միանգամ առանց յոգնելու անցաւ 101 վերստ տարածութիւնը—չնայելով այդ օրը բաւական ճանապարհ էր անցել, այնու ամենայնիւ իմ ուղղեկցի թարմ ձին հազիւ էր նրան հետևում: Ժամի 5 1/4ին մենք գտնւում էինք Գուլթափա կոչուած փոքրիկ քրդական գիւղի մօտ, իսկ մի քառորդ ժամ յետոյ ուղղակի մեր հանգէպ երևաց մի լեռան համարեայ ուղղահայեաց ցած իջնող լանջը, որը տարածւում էր հիւսիսից դէպի հարաւ, նրա անունն է Արձապ, որի ստորոտում տեսայ քրդական կարաջիս գիւղը: Միաժամանակ երևան եկաւ մեծ Արարատի ետևում փոքր Արարատի գագաթը, ապա մենք անցանք մի բազմադրիւր տարածութիւնով: Ժամի 6 ին անցանք Երաս-

խի յայտնի վտակներէց մէկով՝ Գերնառու յայտլ. մի քառորդ ժամ յետոյ անցանք մի երկար տարածուած, կիսաւէր ցեխի պատի պատռուածքով և դրանով մտանք արդէն Բայազետի անմիջական սահմանը: Այդ պատը տարածուելով դէպի արեւելք և արեւմուտք և միանալով Գետաբերն լեռնաշղթայի հետ, աղեւնաձև շրջափակում է մի քանի հեքտար մշակելու համար լաւ հողեր և ծառայել է հաւանականաբար առաջուայ տարիներում իբրեւ նաև պաշտպանութեան միջոց, որովհետեւ Չ մետրից աւելի բարձրութիւն ունի և բաւական ամուր է: Այդ ենթադրութիւնը հաստատում է մանաւանդ նրանով ևս, որ նրանից դուրս՝ աստիճանաբար բարձրացող լեռան գլխին շինուած քաղաքի գլխաւոր անցքի առաջ կառուցած է Զանգեզուր ամրութիւնը, որը գտնուում է դաշտի մէջ, շինուած է եւրոպական ծրագրով և տիրում է միանգամայն Բայազետի անցքին՝ այնտեղից, որտեղից առհասարակ կարելի է մի որ և է յարձակում: Այժմ Զանգեզուրը բարձիթովի է արած և մնում է կիսակործան, որովհետեւ չնայած Բայազետը բնութիւնից պաշտպանուած է և կարելի էր հեշտութեամբ անմերձանելի կացուցանել հիւսիսային կողմում մի քանի ամրութիւններ շինելով, վերջի պատերազմից յետոյ դադարել է ըստ երեւոյթին տաճիկների աչքում իբրեւ ամրութիւն ծառայելուց: Դամի 6 ¹/₂ հասանք քաղաքի առաջի դռներին, իսկ եօթին քաղաքի գլխաւոր միջնաբերդին, որի առաջին կանգնած պահպան զինուորը վերցրեց Բեքիր աղայի ինձ տուած նամակը, իմ թեսքերէն ու գնաց ներս՝ մեր գալը յայտնելու: Երկար ժամանակից յետոյ — արդէն բոլորովին մթնել էր, — յետ տուաւ թըղթերս և իմ առաջնորդիս մի քանի բան ասաց և երկու զինուորների առաջնորդութեամբ գնացինք քաղաքի ներսը: Ես ոչինչ չէի հասկանում, բայց միայն ենթադրեցի, որ Մեհմէդ էֆենդին միջնաբերդում չէ, այլ քաղաքումն է և մեծք գնում էինք նրան որսնելու: Երեք քառորդ ժամից յետոյ ներս մտանք մի սղորմելի տուն և ահա նրա երկբորդ յարկում ներկայացան ինձ Էրկու տաճիկ սպաներ, որոնք ինձ ընդունեցին արեւելեան ձևականութեամբ իւրեանց արդէն յայտնի կրկնուող գլուխ տալովը: Ինչ-

պէս վերջում իմացայ երկու ժամ յետոյ եկող Սարգիսից, Մեհ-
մ. Գ. Էփենդին որոշել էր գիշերելու համար ինձ ուղարկել իւր
ժանդարմների գլխաւոր յիշած երկու սպանների մօտ, որոնք շու-
տով պատրաստել էին ինձ համար իբրեւ օթեւան իւրեանց դի-
ւանատան սենեակներից մէկը և մեր ձիերը տեղաւորել էին
տէրութեան գոմում: Նրանցից հասակաւորը ներկայացաւ ինձ և
յայտնեց իւր մասին, որ նրա անունն է Նազիր — բէյ, լինա-
փուլահ իւղբաշի դաբու փիագէ (որ կը նշանակէ գլխաւոր և ա-
ռաջնորդ յետիոտ ժանդարմների 3 գնդին), միւսը՝ մելազիմ
տեյհար բէյ խաղին օղլի Ալի բէյ: Երկուսն էլ էրզրումից էին,
դառը կերպով գոնգատուում էին, որ օտիպուած են ապրել այդ-
ձանձրալի Բայազետ գիւղում և միևնոյն ժամանակ գոլում էին
իւրեանց մեծ, գեղեցիկ, հետաքրքիր էրզրում քաղաքը, ո-
րի մասին վերջը դրա հակառակ կարծիք կազմեցի: Այդ
միջոցին արդէն ամբողջ քաղաքում կայծակի արագութեամբ
տարածուել էր իմ գալու լուրը և մինչդեռ մենք հանգիստ
նստած թէյ էինք խմում և խօսում, սկսեցին ներս թափուել
տեղի բոլոր բարձրաստիճան ներկայացուցիչները, որոնք զարման-
քով դիտում էին ինձ իբրեւ մի օտար երկրի կենդանու, նրանք ցան-
կանում էին շատ նորութիւններ լսել և հարցնում էին ամենաան-
միա բաների մասին: Նոցա հետաքրքրութիւնը՝ որ սկսեց ինձ շու-
տով ձանձրացնել, հասկանալի էր, երբ լսեցի որ պատերազմից յետոյ
առաջին Եւրոպացին եմ, որ համեմատաբար երկար ժամանակով
մնում եմ Բայազետում: Ինչ որ թէ այստեղի մարդկանց և թէ իմ
ամբողջ ճանապարհորդութեան ժամանակ հանգիպածներին ամե-
նից շատ էր հետաքրքրում՝ հետեւեալ հարցն էր, արդեօք Եւրո-
պայում շուտով պատերազմ կլինի և դրա վերջը ինչ կլինի:
Իմ միշտ կրկնուող պատասխանն էր՝ որ Գերմանիան, խալիփան,
Անգլիան, Տաճկաստանը հակառակ են պատերազմին և խաղա-
ղութիւն են ցանկանում: Իսկ եթէ պատերազմ ծագի՝ դրա հե-
տեանքը խաղաղութիւնը խանգարողների համար կորստաբեր կը
լինի և այդ նոցա բաւականութիւն էր պատճառում: Ժամի 9 1/4
մեր առաջ դրին մեր պարզ ընթրիքը, որ լողկացած էր ոչխարի

մսից, բայց քաղցածներին լաւ դուր եկաւ: Խօսակցութեան ժամանակ տեղեկացի, որ Օհաննէս եպիսկոպոսը Ուլքիլիսայից այդ տեղ է եկել, ուստի յարմար համարեցի ծառայիս ձեռքով Սարգիս Արքեպիսկոպոսի յանձնարարական նամակը նրան ուղարկել և յայտնել, որ վաղը մտադիր եմ նրան տեսնել: Յետոյ տեղեկացայ, որ մեր քաջ ձիերը, որ այդ օրը 64 վերստ ճանապարհ էին անցել և այն էլ քարքարոտ և անհարթ տեղով, լաւ խնամուած են, պատուիրեցի նորից գարի տալ նոցա և ժամի 10 1/2 գնացի քննելու: Հասկանալի է, որ այդքան նեղութիւնից յետոյ փափուկ անկողնում հանգիստ և խորը քնեցի:

Յ.